ՀԱՅԵՐԻ 1915 Թ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պատմ. գիտ. դոկտոր Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

1915 թ. հայկական ցեղասպանության հարցերը քննարկելիս, հավաստի սկզբնաղբյուրների և փաստաթղթերի հետ միասին չափազանց կարևոր նշանակություն է ձեռք բերում օտարազգի պատմաբան-գիտնականների աշխատությունների ուսումնասիրությունը։ Ազգային պատկանելության տեսակետից լինելով չեղոք, չշահագրգռված կողմ, նրանք վեր են կանգնած պրոբլեմի լուսաբանությանը էմոցիոնալ մոտեցում ցուցաբերելուց, ավելի անկաշկանդ են իրենց դատողությունների մեջ և գերծ սուբյեկտիվիզմից։ Խոսքն այստեղ ընդհանուր սկզբունքի մասին է, թեև լինում են, երբեմն նույնիսկ հաճախ, բացառություններ։ Օտարազգի պատմագրության նշանակությունն առավել ևս մեծանում է մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ, եթե ի նկատի ունենանք, որ ժամանակակից թուրքական պատմագրությունը միտումնավոր կերպով կեղծում է 1915 թ. ցեղասպանության պատմությունը, ոչ միայն սքողում ցեղասպանության իսկական շարժառիթները, այլև փորձում ժխտել այդ փաստն իսկ։

Հայ պատմաբանները քիչ բան չեն արել 1915 թ. ցեղասպանության վերաբերյալ օտարերկրյա հետազոտողների՝ մասնավորապես անգլիական, ամերիկյան, ֆրանսիական, ինչպես նաև թուրք պատմաբանների աշխատություններն ուսումնասիրելու ուղղությամբ։ Սակայն նրանց տեսադաշտից ընդհանուր առմամբ դուրս են մնացել արաբ հեղինակների գործերը, մինչդեռ նրանք պարունակում են արժեքավոր նյութ, նրանցում արտահայտվում են հետաքրքիր տեսակետներ, որոնք էգալի չափով օգնում են ավելի ճիշտ պատկերացում կազմելու հայկական ողբերգության մասին[1]։

Որպես կանոն չկա մի արաբ հեղինակ, որն ուսումնասիրելով Օսմանյան կայսրության պատմությունը XX դարի առաջին քսանամյակում, չանդրադառնա Երիտթուրքերի կողմից իրագործած հայերի ցեղասպանությանը։ Դա նրանք անում են պատասխանատվության մեծ զգացումով, գիտնականին վայել անաչառությամբ և հիմնավոր փաստարկումներով։

Հայտնի է, որ օգտագործած սկզբնաղբյուրների նկատմամբ վերաբերմունքը հանդիսանում է տվյալ ուսումնասիրության լրջության և նրա հեղինակի եզրահանգումների հավաստիության չափանիշներից մեկը։ Գիտակցելով դրա կարևորությունը, արաբ հեղինակները 1915 թ. հայկական ցեղասպանության հարցերը լուսաբանելիս անհրաժեշտ են համարում նշել իրենց օգտագործած հիմնական աղբյուրները։ Այսպես, օրինակ, եգիպտացի հեղինակ Ֆուադ Հաֆիզը առանձնացնում է փաստաթղթերի մի շարք ժողովածուներ, այդ թվում լորդ Բրայսի կազմած «Վերաբերմունքը հայերի

---

[1] *Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ն. Հ. Հովհաննիսյան. Սուլթան Աբդուլ Համիդ II-ի հակահայկական քաղաքականությունն արաբական պատմագրության գնահատմամբ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 1։*

նկատմամբ Օսմանյան կայսրությունում», Անդրեյ Մանդելշտամի «Օսմանյան կայսրության ճակատագիրը» և այլն[2]։

Աղբյուրների նկատմամբ յուրահատուկ մոտեցում է ցուցաբերել սիրիացի պատմաբան Ուսման աթ-Թուրքը։ Նա հիմնականում հենվել է գերմանական աղբյուրների վրա, ելնելով այն բանից, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիան Օսմանյան կայսրության դաշնակիցն էր և «գերմանական դիվանագետները զգույշ էին, որպեսզի համաշխարհային հասարակական կարծիքի առջև չսևացնեն իրենց թուրքական դաշնակցին»[3]։ Մյուս կողմից նա չի օգտագործել որևէ հայկական կամ անգլիական նյութ, ընդգծելով, որ «եթե մենք հենվեինք հայկական կամ թուրքերին թշնամի օտարերկրյա աղբյուրների վրա, ապա կարող էր կասկած սողոսկել այն բանի ճշմարտացիության վերաբերյալ, ինչի մասին որ գրում ենք»[4]։

Արաբ հեղինակների աշխատություններում մեծ տեղ է գրավում հայկական ցեղասպանության պատճառների և կազմակերպիչների հարցը։ Այդ տեսակետից ուշագրավ է Ֆուադ Հաֆիզի տված բացատրությունը, որն այս կամ այն չափով բնորոշ է նաև մյուս արաբ հեղինակներին։ «Հայկական ցեղասպանության իսկական պատճառները,— ընդգծում է նա,— կայանում են նրանում, որ օսմանյան պետությունը կառավարող Իթթիհադ վե Թերաքքի կուսակցության ոհմակը՝ Էնվեր-փաշայի, Ջեմալ-փաշայի և Թալաաթ-փաշայի եռապետության գլխավորությամբ ձգտում էր օգտվել բարենպաստ իրադրությունից՝ վերացնելու Հայկական հարցը հենց օսմանյան հայերին վերացնելու ճանապարհով»[5]։ Այդ խնդրում տեսնելով հաջորդայնություն սուլթան Աբդուլ Համիդ II-ի և երիտթուրքերի քաղաքականության միջև, Ֆուադ Հաֆիզը նկատում է, որ հայերին ոչնչացնելը համապատասխանում էր երիտթուրքերի երկու կարևոր երազանքներին. առաջին՝ Օսմանյան կայսրությունն էթնիկական առումով դարձնել մաքուր թուրքական պետություն և երկրորդ՝ «նրան միացնել ռուսական շրջանները, որոնք բնակեցված են թյուրքական մուսուլմանական ժողովուրդներով, մասնավորապես Կովկասը, ինչպես նաև Դաղստանը»[6]։ Սակայն, շարունակում է եգիպտացի պատմաբանը, «այդ երկու խնդիրները պահանջում էին օսմանյան հայերի վերջնական ոչնչացում, քանի որ նրանք ներկայացնում էին կարևոր կրոնական և էթնիկական, այսինքն ոչ մուսուլմանական և ոչ թուրքական փոքրամասնություն, և ըստ էության անհնազանդ և ընդդիմադիր տարր էին, որոնք խանգարում էին թուրքերին լրիվ կերպով տարածելու իրենց տիրապետությունը և ծառայելու օսմանյան պետությանը... Նրանք (հայերը—Ն. Հ.) արգելք էին, որն անհրաժեշտ էր վերացնել»[7]։ Պետք է նշել, որ հայկական ցեղասպանության պատճառները բացատրելիս արաբ պատմաբանները՝ Մրվան ալ-Մուդավարը[8], Ուսման աթ-

---

2 فؤاد حافظ ، تاريخ الشعب الارمني منذ البداية حتى اليوم ، القاهرة ١٩٨٦ ، ص ٢٩٨ - ٢٩٩

(Ֆուադ Հաֆիզ. Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը. Կահիրե, 1986, էջ 298—299,

3 عثمان الترك ، صفحات من تاريخ الامة الارمنية ، حلب ، ١٩٦٠ ، ص ٢٣٩

(Ուսման աթ-Թուրք. Էջեր հայ ազգի պատմությունից. Հալեպ, 1900, էջ 239),

4 Նույն տեղում։

5 Ֆուադ Հաֆիզ. Նշվ. աշխ., էջ 302։

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում։

8 مروان المدور ، الارمن عبر التاريخ ، بيروت ، ١٩٨٢

(Մրվան ալ-Մուդավար. Հայերը պատմության մեջ. Բեյրութ, 1982),

Թուրքը, Հուսեյն Մուրուվան[9], Մուսա Պրենսը[10], Ջիհադ Սալիհը[11] և ուրիշներ չափազանց կարևոր տեղ են հատկացնում երիտթուրքերի կողմից կիրառված պանթուրանիզմի քաղաքականությանը։ Լիբանանցի հեղինակ Ջիհադ Սալիհը «Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև» աշխատության մեջ թուրանիզմը, հայերին և օսմանյան կայսրության մյուս հպատակներին թուրքացնելու, շարդերի և կոտորածների քաղաքականությունը բնութագրում է որպես «ռասայական, շովինիստական, ֆաշիստական շարժում»[12]։

Ցեղասպանության պատճառների բացահայտման հետ միասին արաբ հեղինակները զգալի ուշադրություն են դարձնում նաև երիտթուրքերի ղեկավարների պաշտոնական տեսակետներին այդ հարցի վերաբերյալ։

Մուսա Պրենսը, Ուսման աթ-Թուրքը, Ֆուադ Հաֆիզը և մյուսները, մասնավորապես անդրադառնում են երիտթուրքերի ղեկավարների կողմից առաջ քաշված «արևմտահայերի դավաճանության» վերաբերյալ թեզին և այդ թեզի ամենաուժանրակշիռ «փաստարկին»՝ հայերի ապստամբությանը Վանում 1915 թ. ապրիլին։ Ինչպես ընդգծում է Ուսման աթ-Թուրքը, «Վանի «ապստամբությունը» լայնորեն օգտագործվում էր թուրքերի կողմից որպես «հայերի դավաճանության» ապացույց»[13]։ Արաբ պատմաբանները գտնում են, որ Վանում ապստամբություն չի եղել։ Ուսման աթ-Թուրքը Վանի դեպքերի ամբողջ պատասխանատվությունը դնում է Վանի նահանգապետ, Էնվերի փեսա Ջևդեթի և թուրքերի վրա, որոնք ձգտում էին գրավել հայերի թաղամասերը և տները։ «Եվ ապրիլի 17-ին,— գրում է սիրիացի պատմաբանը,— թուրքերն սկսեցին իրենց հարձակումը։ Նրանք հայկական թաղամասերը ռմբակոծում էին թնդանոթներից, և հայերը պաշտպանվում էին»[14]։

Մուսա Պրենսը նույնպես գտնում է, որ Վանում առաջինը հարձակվել են թուրքերը, իսկ հայերը պաշտպանվել են, ինչը նա համարում է միանգամայն օրինական[15]։

Այս հարցին բավականին հանգամանորեն է անդրադառնում նաև Ֆուադ Հաֆիզը։ «Հայերը,— գրում է նա,— 1915 թ. ապրիլին Վանում չեն ապստամբել, այլ պաշտպանում էին իրենց սեփական կյանքը օսմանյան ուժերի հարձակումներից»[16]։

Արաբ ուսումնասիրողներն իրենց աշխատություններում շոշափում են նաև մի այնպիսի հարց, ինչպես ջիհադը և նրա դերը հայկական ցեղասպանության կազմակերպման գործում։

Ջիհադ (մուսուլմանների սրբազան պատերազմը անհավատ-քրիստոնյաների դեմ) օսմանյան կառավարությունը հայտարարեց 1914 թ. նոյեմբերի 23-ին։ Լիբանանցի պատմաբան Զեյն Զեյնի կարծիքով երիտթուրքերը ջիհադը ձգտում էին օգտագործել իսլամի և Օսմանյան կայսրության պաշտպանության համար[17]։ Պաղեստինցի հետազոտող Էմիլ Թուման ուշադրություն է

---

9 حسين مروة ، بين الطورانية ... والصهيونية - مجازر الارمن ، بيروت ، ١٩٨٦

(Հուսեյն Մուրուվա. Թուրանիզմի ... և սիոնիզմի միջև. Հայերի կոտորածը. Բեյրութ, 1988)։

10 Moussa Prince. L'Armenocide. Introduction. Beyrouth, 1976.

11 جهاد صالح ، الطورانية التركية بين الاصولية والفاشية ، بيروت ، ١٩٨٧

(Ջիհադ Սալիհ. Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև. Բեյրութ, 1987)։

12 Նույն տեղում, էջ 5։

13 Ուսման աթ-Թուրք. Նշվ. աշխ., էջ 240։

14 Նույն տեղում, էջ 241։

15 Moussa Prince. Op. cit., p. 34.

16 Ֆուադ Հաֆիզ. Նշվ. աշխ., էջ 302։

17 Zeine N. Zeine. The Emergence of Arab Nationalism. N. Y., 1973, p. 110.

դարձնում այն հանգամանքի վրա, որ սրբազան պատերազմի վերաբերյալ սուլթանի կոչը ուղղված էր «բրիտանական և ֆրանսիական գաղութների մուսուլմաններին»[18]։ Լրացնելով Էմիլ Թումային, Ֆուադ Հաֆիզը իրավացիորեն գտնում է, որ ջիհադի կոչը ուղղված էր ոչ միայն Անգլիայի և Ֆրանսիայի, այլև Ռուսաստանի և Իտալիայի հպատակ մուսուլմաններին։ Նրա կարծիքով Թուրքիայի կողմից կրոնական պատերազմ հայտարարվեց առաջին հերթին Ռուսաստանին[19]։

Սակայն եթե ջիհադի կոչը Էմիլ Թումայի վկայությամբ արտաքին քաղաքական առումով «շոշափելի արդյունքներ չունեցավ»[20], այսինքն մուսուլմանական ժողովուրդները ոտքի չելան հանուն սրբազան պատերազմի, ապա այն աղետավոր հետևանքներ ունեցավ Օսմանյան կայսրության ներսում, որտեղ չտեսնված բարձրացավ կրոնական մոլեռանդության ալիքը, և որը երիտթուրքերն օգտագործեցին, ինչպես նշում է Ֆուադ Հաֆիզը, «ընդդեմ քրիստոնյա հպատակների, և առաջին հերթին՝ ընդդեմ հայերի»[21]։ Մեր կարծիքով սա ուշագրավ տեսակետ է և օգնում է 1915 թ. ցեղասպանության մեխանիզմը ճիշտ հասկանալուն։

Արաբ հետազոտողները, համոզիչ կերպով հերքելով հայերի դավաճանության վերաբերյալ վարկածը, գտնում են, որ հայերի ցեղասպանությունը 1915 թ. կատարվել է երիտթուրքերի ղեկավարների կողմից նախօրոք կազմված ծրագրի համաձայն, որը խարսխվում էր օսմանյան պետությունը մաքուր թուրքական պետության վերածելու ռասայական գաղափարի և պանթուրքիզմի քաղաքականության կենսագործման համար ուղի հարթելու ձգտման վրա։ Արաբ հեղինակներն իրենց աշխատություններում վկայակոչում են Իթթիհադ վե Թերաքքի կուսակցության կենտրոնական կոմիտեի՝ հայերին ոչնչացնելու որոշումները, երիտթուրքերի ղեկավարների հեռագրերը թուրքական նահանգապետներին այդ որոշումները տեղերում խստագույնս կիրառելու մասին։ Այսպես, օրինակ, Ֆուադ Հաֆիզը նշում է երիտթուրքերի ղեկավարների 1915 թ. փետրվարի սկզբներին տեղի ունեցած գաղտնի խորհրդակցությունը, որին մասնակցել են Էնվերը, Թալաաթը, Բեհաէդդին Շաքիրը և Ահմեդ Աղաևը, որը, եգիպտացի պատմաբանի բնութագրմամբ հանդիսանում էր 1905 թ. Բաքվում հայերի կոտորածների կազմակերպիչը։ Այդ խորհրդակցությունում որոշվում է «օսմանյան պետության մեջ ոչնչացնել հայերին»[22]։ Այդ որոշման մասին, ինչպես հավաստում է Ուսման աթ-Թուրքը, Էնվերը տեղյակ է պահում Կոստանդնուպոլսում գերմանական դեսպան Վանգենհայմին, որն իր հերթին իր կառավարությանը 1915 թ. մայիսի 31-ին հղված հեռագրում հայտնում է, որ «Էնվերը մեզանից պահանջում է չխոչընդոտել այդ նախապատրաստություններին (հայերի ոչնչացմանը—Ն. Հ.)[23]։

Այս և այլ փաստաթղթերի հիման վրա սիրիացի պատմաբանը գալիս է այն եզրակացության, որ չափազանց մեծ է Գերմանիայի դերը և պատասխանատվությունը հայերի 1915 թ. ցեղասպանության կազմակերպման գործում։ Նրա հետ այս հարցում տարակարծիք չեն արաբական մյուս հեղինակները։

Սակայն ինչքան էլ մեծ եղած լինի Գերմանիայի պատասխանատվությունը հայերի ցեղասպանությունը չկանխելու գործում, արաբ պատմաբանները ցեղասպանության կազմակերպման և իրագործման գլխավոր մեղավորը համարում են օսմանյան պետությունը և նրա երիտթուրքական ղեկավարու-

---

18 Э. Тума. Национально-освободительное движение и проблема арабского единства. М., 1977, с. 138.

19 Ֆուադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 301։

20 Э. Тума. Указ. соч., с. 138.

21 Ֆուադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 301։

22 Նույն տեղում, էջ 303։

23 Ուսման աթ-Թուրք. նշվ. աշխ., էջ 244։

թյանը. «Հայերի 1915 թ. ցեղասպանության պատասխանատվությունը,— գրում է Ֆուադ Հաֆիզը,— ընկնում է նախ և առաջ օսմանյան պետության կառավարության վրա և առաջին հերթին Թալաաթ-փաշայի՝ ներքին գործերի մինիստրի, հետագայում մինիստրների խորհրդի նախագահի, և նրա գործընկերների՝ Էնվեր-փաշայի և Ջեմալ-փաշայի վրա»[24]։ Նույն տեսակետն են արտահայտում նաև մյուս արաբ պատմաբանները։ Լիբանանի համալսարանի պրոֆեսոր Մասուդ Դաիրը նշում է, որ հայերի զգալի մասը վերածվեց փախստականների և ապաստան գտավ արաբական երկրներում թուրքերի կողմից իրագործված ցեղասպանության հետևանքով[25]։ Նույն որոշակիությամբ է արտահայտվում սիրիացի հետազոտող Խեյրի Համան, ընդգծելով, որ «1915—1918 թթ. ընթացքում թուրքերն իրագործեցին մոտ մեկ միլիոն հայերի կոտորածը և արտաքսեցին հարյուր հազարավորներին»[26]։ Հայկական ցեղասպանությունը կազմակերպելու և ղեկավարելու մեջ ուղղակիորեն Թալաաթին է մեղադրում եգիպտացի հայտնի պատմաբան, բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրությունների հեղինակ Ամին Սաիդը։ «Թուրքիայի ներքին գործերի մինիստր Թալաաթ-բեյը,— գրում է նա,— ղեկավարեց հայերին ոչընչացնելու արշավը։ Այդ արշավի կազմակերպչի ծրագիրը կայանում էր նրանում, որ արտաքսի հայերին Արևելյան Անատոլիայից և զինվորների հսկողությամբ նրանց հետիոտն քշի Արաբական անապատ, որտեղ նրանց անխուսափելի մահ էր սպասում»[27]։

Կարելի էր շարունակել այս ցանկը։ Սակայն ասվածն էլ միանգամայն բավարար է պնդելու համար, որ արաբ հետազոտողները միակարծիք են այն հարցում, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կազմակերպվել է հայերի ցեղասպանություն և դա արել են երիտթուրքական ղեկավարները՝ ըստ նախօրոք մշակված ծրագրի։

Արաբ հեղինակների աշխատություններում բավականին մանրամասն նկարագրված է հայերի ցեղասպանության սահմռկեցուցիչ պատկերը ինչպես վեց հայկական վիլայեթներում՝ Էրզրումում, Խարբերդում, Սվասում, Բիթլիսում, Վանում և Դիարբեքիրում, այնպես էլ Օսմանյան կայսրության մյուս շրջաններում։ Դրա հետ միասին նրանց աշխատություններում տեղ է գտել հայերի հերոսական ինքնապաշտպանական մարտերի նկարագրությունը։ Սակայն արաբական հեղինակները քաջ գիտակցում են, թե դա ինչ բարդ խնդիր է եղել հայերի համար, քանի որ հայկական քաղաքներն ու գյուղերն ըստ էության մնացել էին առանց զենք կրելու ընդունակ տղամարդկանց։ Արաբ հեղինակները այդ հանգամանքի վրա մեծ ուշադրություն են դարձնում։ «1914 թ.,— գրում է Ուսման աթ-Թուրքը,— բանակ զորակոչվեցին անխտիր բոլորը, 18-ից մինչև 48 տարեկանը»[28]։ Զորակոչի ենթարկված հայ տղամարդիկ գտնվում էին իրենց բնակավայրերից հեռու և նրանց օգտագործում էին շինարարական աշխատանքներում։ Թուրքական հրամանատարության հրամանով հայ զինվորները, ինչպես ընդգծում է Մուսա Պրենսը, զինաթափ են արվում և այնուհետև սպանվում[29]։ Այդ նենգ արարքի հետևանքով արևմտահայությունը զրկվեց զենք կրելու ընդունակ տղամարդկանցից, իսկ քաղաք-

---

24 Ֆուադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 315։

25 مسعود ضاهر ، تاريخ لبنان الاجتماعي ، بيروت ، ١٩٧٤ ، ص ٢٩٢
(Մասուդ Դաիր. Լիբանանի սոցիալական պատմությունը. Բեյրութ, 1974, էջ 292)։

26 خيري حمدان ، اضواء اولية على المسألة الارمنية - « المناضل » العددان ١٢٣ - ١٢٤ ، دمشق ، ١٩٨٣ ، ص ٢٢
(Խեյրի Համա. Հայկական հարցի լուսաբանումը.—«Ալ-Մունադիլ», Դամասկոս, 1983, № 163—164, էջ 22)։

27 Амин Саид. Восстания арабов в XX в. М., 1964, с. 79.

28 Ուսման աթ-Թուրք. նշվ. աշխ., էջ 238։

29 Moussa Prince. Op. cit., p. 32.

ներում և գյուղերում մնացին հիմնականում ծերեր, կանայք, հիվանդներ և երեխաներ։ Արաբ հեղինակները հասկանում են, որ մասամբ դրանով կարելի է բացատրել երիտթուրքերի հաջողությունը իրենց հրեշավոր ծրագրերի իրագործման բնագավառում։ Այսուհանդերձ, անգամ այդպիսի դժվարին պայմաններում հայկական ազգաբնակչությունը բազմաթիվ վայրերում կարողացավ կազմակերպել հերոսական դիմադրություն, որն իր արտացոլումն է գտել արաբ պատմաբանների աշխատություններում։ Նրանք, մասնավորապես Մուսա Պրենսը, Մրվան ալ-Մուդավարը, Ուսման աթ-Թուրքը, Ֆուադ Հաֆիզը և այլք, ամբողջական էջեր են նվիրել Մուսա լեռան, Սասունի, Վանի և այլ վայրերի հերոսական պաշտպաններին[30], հիանալով նրանց խիզախությամբ և անձնազոհությամբ։

Արաբական պատմագրությանը բնորոշ է մի ուշագրավ, գիտականորեն միանգամայն պատճառաբանված մոտեցում հայկական ցեղասպանության հարցերի լուսաբանմանը։ Հայերի նկատմամբ երիտթուրքերի քաղաքականությունը արաբական պատմագրության մեջ չի քննարկվում մեկուսի մյուս ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ նրանց քաղաքականությունից։ Արաբ հետազոտողները այդ հարցերը դիտարկում են օսմանյան կառավարության ազգային քաղաքականության ընդհանուր համակարգում, հանգուցելով այն մասնավորապես արաբների, ասորիների և մյուս ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ երիտթուրքերի վարած քաղաքականության հետ։ Նման մոտեցումը նպաստում է ավելի խորը և համակողմանիորեն ըմբռնել և բացահայտել մի կողմից երիտթուրքերի ազգային քաղաքականության էությունը, իսկ մյուս կողմից՝ հայկական ցեղասպանության բուն պատճառները։

Արաբական պատմագրության մեջ տիրապետող է այն տեսակետը, որ Երիտթուրքերը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ամենավտանգավորը համարում էին արաբներին և հայերին, ի նկատի ունենալով ազգային ինքնուրույնության, ինքնապահպանման նրանց ձգտումները։ Ուստի և երիտթուրքերի ծրագրերի մեջ, ըստ արաբ պատմաբանների, մտնում էր ոչ միայն հայերի, այլև արաբների ոչնչացումը։ Այդ կարծիքը շատ հստակ կերպով է արտահայտված մի այնպիսի լավատեղյակ հեղինակի մոտ, ինչպիսին է եգիպտացի պատմաբան Ամին Սաիդը։ Նա գրում է, որ առաջին հաղթանակները, որ գերմանա-թուրքական բլոկը տարավ առաջին համաշխարհային պատերազմի սկզբում, «գլխապտույտ առաջացրին Ստամբուլի կառավարության ղեկավարների մոտ, որոնք պանթուրքիզմի մեծ ջատագովներ էին։ Նրանք որոշեցին, որ հասել է հարմար պահը վերջ տալու երկու ուժեղ ազգային շարժումներին՝ արաբական ազգայնականների շարժմանը Սիրիայում, Իրաքում և Հիջազում և հայկական շարժմանը՝ Արևելյան Անատոլիայում։ Բանն այն էր, որ Թուրքիայի ներքին շրջաններում շատ հայեր էին ապրում»[31]։ Այնուհետև նա նշում է, որ հայերի ոչնչացման արշավը ղեկավարեց Թալաաթը, իսկ արաբներինը՝ Ջեմալը։ «Սիրիայում,— գրում է Ամին Սաիդը,— այդ խնդրի իրագործմանը ձեռնամուխ եղավ ռազմածովային մինիստր և Թալաաթ-բեյի գործընկեր Ահմեդ Ջեմալ-փաշան, որին Սիրիայում կոչում էին «արյունարբու»։ Բեյրութում, Դամասկոսում և Ղազայում կախաղաններ կանգնեցվեցին։ Ահմեդ Ջեմալ-փաշան կախում էր, աքսորում և բանտ նստեցնում»[32]։ Այնուհետև Ամին Սաիդը կատարում է հետևյալ լրացումը. «Ուշագրավ է այն փաստը, որ թուրքական կառավարությունը, որը կատարեց այդ բոլոր ոճրագործությունները և որը ձգտում էր ամբողջապես ոչնչացնել

---

30 Նույն տեղում, էջ 32—34; Ուսման աթ-Թուրք. նշվ.աշխ., էջ 241—242; Ֆուադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 301, 313 և այլն։

31 Амин Саид. Указ. соч., с. 79.

32 Նույն տեղում, էջ 80։

երկու ազգություններին՝ հայերին և արաբներին, գլխավորում էր էմիր Սաիդ Հալիմը՝ Մուհամեդ Ալիի թոռը»[33]։

Արաբներին ոչնչացնելու ուղղությամբ թուրքական կառավարության գործնական քայլերի մասին են գրում նաև Զեյն Զեյնը, Մասուդ Դաիրը, Ֆուաադ Հաֆիզը և մյուսները։ Այսպես, օրինակ, Զեյն Զեյնը նշում է, որ Ջեմալ-փաշան 1915 թ. «որպես «դավաճաններ» մահվան դատապարտեց բազմաթիվ արաբ ղեկավարների, մեղադրելով, որ նրանք ապակենտրոնացման միջոցով ուզում էին տրոհել Օսմանյան կայսրությունը և իրենց երկիրը ծախել օտարերկրացիներին»[34]։ Ինչպես տեսնում ենք, նույն մեղադրանքները «դավաճանության» մեջ, ինչի մեջ որ մեղադրում էին նաև հայերին։ Այնուհետև լիբանանցի պատմաբանը նկարագրում է արաբական շատ ղեկավարների մահապատիժը Բեյրութում և Դամասկոսում 1915—1916 թթ.։ Բացի այդ, ինչպես նշում է Զեյն Զեյնը, «շատ ընտանիքներ աքսորվեցին Անատոլիայի ներքին շրջանները և շատերի գույքը բռնագրավվեց»[35]։ Երիտթուրքերը արաբների նկատմամբ կիրառում էին այն ամենը, ինչ որ կիրառել էին հայերի նկատմամբ։ Նույնիսկ կարելի է պնդել, որ այն փորձը, որ երիտթուրքերը ձեռք էին բերել Հայկական հարցը «լուծելու» գործում, այժմ նրանք կիրառում էին արաբների նկատմամբ։

Ջեմալի և նրա շրջապատի կողմից արաբների նկատմամբ կիրառված չարագործությունների մասին գրում է նաև Մասուդ Դաիրը։ Նա մասնավորապես նշում է արաբական ազգային գործիչների կազմակերպված սպանությունների մասին, որ իրագործել է հենց ինքը՝ Ջեմալը[36]։ Այդ են հաստատում նաև առանձին թուրքական փաստաթղթերը։ Այս կապակցությամբ տեղին ենք համարում մեջբերել Հալեպում Աքսորման գործերի գլխավոր կոմիտեի ներկայացուցիչ Աբդուլլահաղ Նուրի-բեյի և նրա գլխավոր քարտուղար Նաիմ-բեյի միջև տեղի ունեցած զրույցը, որը գրի է առնված Նաիմ-բեյի հուշերում։ «Մի անգամ,— գրում է Նաիմ-բեյը,— ես ասացի Աբդուլլահաղ Նուրի-բեյին. «Բեյ-էֆենդի, եկեք հայերի աքսորը անենք նվազ խիստ, այլ կերպ մահը կսպառնա ամբողջ Միջագետքին։ Այդ ընդարձակ տարածություններում ոչ ոք, բացի սատանաներից, չի մնա։ Ռասուլ Այնի կայմակամը տագնապալի լուրեր է հաղորդում»։ Նուրի-բեյը ծիծաղեց։ «Զավակս,— ասաց նա,— այդ կերպ մենք միանգամից կազատվենք երկու վտանգավոր տարրերից։ Հայերի հետ ախր մեռնում են արաբները։ Մի՞թե դա վատ է։ Ախր ճանապարհ է մաքրվում թուրքիզմի համար»[37]։

Հայերի և արաբների հետ միասին ոչնչացման ենթակա ժողովուրդների ցանկի մեջ էին մտցված նաև ասորիները։ «Դիարբեքիրի վիլայեթում,— գրում է Ֆուաադ Հաֆիզը,— ջարդերը տարածվեցին նաև ասորական և քաղկեդոնական քրիստոնյաների վրա։ Հազարավոր ասորիներ և կաթոլիկներ սպանվեցին ոչ միայն Դիարբեքիրում, այլև Մերդինում և Ուրֆայում, որոնք չէին մտնում հայկական վիլայեթների մեջ»[38]։ Ասորիների կոտորածների մասին են գրում նաև իրաքցի պատմաբաններ Շաքիր Խասբաքը, Մուհամեդ Ահմադ ալ-Մահանան, Ֆեյսալ Նաջիմ ադ-Դին ալ-Ատրակչին[39] և այլ հեղինակներ։

---

33 Նույն տեղում։ (Մուհամեդ Ալին Եգիպտոսի տիրակալն էր 1805—1847 թթ.)։

34 Zein N. Zein, Op. cit., p. 110.

35 Նույն տեղում։

36 Մասուդ Դաիր. Նշվ. աշխ., էջ 25—26։

37 Մեջբերում ըստ Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под редакцией М. Г. Нерсисяна. Ереван, 1982, с. 473.

38 Ֆուաադ Հաֆիզ. Նշվ. աշխ., էջ 313։

39 شاكر خصباك ، محمد احمد المينا ، فيصل نجم الدين الاطرقجى ، جغرافية العراق ، بغداد ، ١٩٥٩ ، ص ٢٢١ (Շաքիր Խասբաք, Մուհամեդ Ահմադ ալ-Մահանա, Ֆեյսալ Նաջիմ ալ-Ատրակչի. Իրաքի աշխարհագրություն. Բաղդադ, 1959, էջ 221)։

Մեր կարծիքով արաբ հեղինակների այսպիսի համակողմանի մոտեցումը երիտթուրքերի ազգային քաղաքականությանը մեծապես օգնում է յուրաքանչյուր անկանխակալ ընթերցողի համոզվելու, որ Օսմանյան կայսրության ոչ թուրքական ժողովուրդների ոչնչացումը երիտթուրքերի գլխավոր ծրագիրն էր։ Դա միայն վերացական հարցադրում չէր և առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գործնական քայլեր արվեցին այդ անմարդկային ծրագրի իրագործման ուղղությամբ։ Ուստի հայկական ցեղասպանության և նրա պատճառների հետ կապված հարցերի քննարկման ժամանակ հարկ է միշտ ի նկատի ունենալ այս հանգամանքը։ Մենք դա համարում ենք արաբական պատմագրության կարևոր ներդրումներից մեկը Օսմանյան կայսրության նոր շրջանի պատմության ուսումնասիրության բնագավառում։

Անդրադառնանք մի հարցի ևս։ Հայտնի է, որ հայկական ցեղասպանության համարյա բոլոր գլխավոր կազմակերպիչները առաջին համաշխարհային պատերազմից հետո արժանի հատուցում ստացան հայ ժողովրդական վրիժառուների կողմից։ Ինչպե՞ս են գնահատվում նրանց գործողությունները արաբական պատմագրության մեջ։ Արաբ հեղինակները երիտթուրքական ոճրագործների սպանությունը հայ վրիժառուների կողմից համարում են միանգամայն բնական պատիժ։ Լիբանանյան հանրագիտարանում նրանք բնութագրվում են որպես հերոսներ, ֆիդայիներ, մարդիկ, որոնք իրենց նվիրաբերել են արդար գործի[40]։ Ամին Սաիդը ընդգծելով, որ պատերազմից հետո հայ երիտասարդության ներկայացուցիչները սպանեցին էմիր Սաիդ Հալիմին, Ահմեդ Ջեմալին և Թալաաթին, դրա մեջ որևէ տարօրինակ կամ զարմանալի բան չի տեսնում[41]։ Ֆուադ Հաֆիզը նույնպես այդ հայ երիտասարդներին համարում է ֆիդայիներ։ Սակայն շատ հետաքրքիր և ինքնատիպ է Ֆուադ Հաֆիզի տված ընդհանուր գնահատականը։ Նշելով, որ պատերազմից հետո սպանվեցին երիտթուրքերի պարագլուխները, նա ընդգծում է. «Դա արդարացի պատիժ էր ոչ միայն 1915 թ. առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի ցեղասպանության, այլև արաբական ապստամբության ղեկավարների սպանության համար, որոնք կախաղանի միջոցով մահապատժի ենթարկվեցին Շամի (Սիրիա—Ն. Հ.) վիլայեթում տեղադրված օսմանյան չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ-փաշայի կողմից 1916 թ.»[42]։ Կարծում ենք, որ եգիպտացի պատմաբանը իրավունք ուներ այդ կերպ մեկնաբանել Թալաաթի, Ջեմալի, Մուհամեդ Սաիդ Հալիմի, Բեհաէդդին Շաքիրի՝ երիտթուրքերի ոճրագործ ղեկավարների սպանությունը։ Դրանք այն նույն մարդիկ էին, որ հանդես էին գալիս թուրանիզմի և Օսմանյան կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների թուրքացման ցնորամիտ ծրագրերով, որոնց իրագործման ճանապարհին տվյալ ժամանակաշրջանում կանգնած էին առաջին հերթին հայերը և արաբները և որոնց ոչնչացումը համարվում էր պատմական անհրաժեշտություն։ Հետևաբար հայ ֆիդայիները պատժել էին նրանց, ովքեր հանդիսանում էին հայերի և արաբների ազատագրական ձգտումների և ազգային ինքնության պահպանման թշնամիները։

Իսկ այժմ կանգ առնենք արաբական պատմագրության մեջ հայկական ցեղասպանությանը տրված ընդհանուր գնահատականի վրա՝ կապված մարդկության դեմ կատարվող հանցագործությունների ընդհանուր շղթայում նրա գրաված տեղի հետ։

Մուսա Պրենսը ցեղասպանությունը բնութագրելով որպես «հանցագործություն մարդկության դեմ», շրջանառության մեջ է դրել արմենոցիդ՝ հա-

---

40 دائرة المعارف : قاموس عام لكل فن ومطلب ، المجلد العاشر ، بيروت ، ١٩٧٣ ، ص ٣١٠ (Դաիրաթ ալ-Մուաարիֆ..., հ. 10. Բեյրութ, 1973, էջ 310)։

41 Амин Саид. Указ. соч., с. 80.

42 Ֆուադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 316։

յասպանություն տերմինը։ Նա գտնում է, որ «արմենոցիդը ամենագենոցիդային գենոցիդն է»[43]։ Չնայած այդ հանգամանքին, նա ցավով է ընդգծում, որ հայասպանության մեղավորները և կազմակերպիչները պաշտոնապես չեն պատժվել, քանի որ «հայասպանությունը չունեցավ իր Նյուրնբերգը»[44]։

Ուսման աթ-Թուրքը հայերի ցեղասպանությունը համարում է բարբարոսական արարք, որը «համայն քաղաքակիրթ մարդկության ցասումն առաջ բերեց»[45]։ Իսկ Ֆուադ Հաֆիզի համար հայերի ցեղասպանությունը հանդիսանում է «միջազգային իրավունքի բոլոր նորմերի և մարդասիրության սկզբունքների» խախտում[46]։ Հայերի 1915 թ. ցեղասպանությունը դիտելով որպես մարդկության նոոսֆերայի պատմության մեջ առաջին ցեղասպանությունը, նա դա համարում է «XX դարի սև էջ»[47]։

Ինչպես տեսնում ենք, արաբ հեղինակները հայկական ցեղասպանությանը գնահատական տալիս չեն սահմանափակվում լոկ հայկական իրականության շրջանակներով։ Նրանք մի կողմից դա դիտում են որպես հանցանք ընդհանրապես մարդկության դեմ, իսկ մյուս կողմից հայկական ցեղասպանությունը քննարկում են հետագայում մյուս ժողովուրդների նկատմամբ կիրառված ցեղասպանության հետ փոխկապակցվածության մեջ, դրանում տեսնելով որոշակի դենետիկական կապ։ Այդ գիծը շատ որոշակի է դրսևորվում, երբ արաբ հետազոտողները ցույց են տալիս որոշակի հաջորդայնություն երիթթուրքերի կիրառած հայասպանության և Հիտլերի կողմից երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Եվրոպայի մի շարք ժողովուրդների նկատմամբ կիրառած ցեղասպանության քաղաքականության միջև։ Մուսա Պրենսի կարծիքով, այն, ինչ որ արեցին երիթթուրքերը, քառորդ դար անց կրկնեց Հիտլերը[48]։ Հիշեցնելով Հիտլերի ելույթը 1939 թ. օգոստոսի 22-ին, որտեղ նա կոչ էր անում ոչնչացնել բոլոր լեհերին, բացականչելով, «թե վերջիվերջո ո՞վ է այսօր հիշում հայերի ոչնչացումը», Մուսա Պրենսը իրավացիորեն եզրակացնում է. «Արմենոցիդը եղավ նացիստների կողմից իրագործված գենոցիդի նլակետային փուլը»[49]։ Նման մտքերի էինք հանդիպում նաև Ֆուադ Հաֆիզի մոտ։ «Երբ Ադոլֆ Հիտլերն իրագործեց իր ցեղասպանությունը,— գրում է նա,— նա հիշեցրեց հայկական ցեղասպանության մասին՝ որպես օրինակ և նմուշ»[50]։ Եվ չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ երիթթուրքերը գերմանական ֆաշիստների ուսուցիչները եղան ազգերին և ժողովուրդներին ոչնչացնելու հարցում։

Արաբ պատմաբանները հաջորդայնությունը ցեղասպանության քաղաքականության մեջ դիտարկում են ոչ միայն նացիստների կողմից երիթթուրքերին ընդօրինակելու և ոչ միայն «երիթթուրքեր-նացիստներ» սխեմայի շրջանակներում։ Ըստ նրանց, հաջորդայնությունը դրսևորվում է նաև պաղեստինցի արաբների նկատմամբ սիոնիստների քաղաքականության մեջ։ Դոկտոր Շաֆիկ Ռայեսի կարծիքով իսրայելական կառավարության քաղաքականությունը պաղեստինյան հարցում «կարելի է համեմատել թուրքական կառավարության քաղաքականության հետ, որը համոզված էր, որ Հայկական հարցին վերջ տալու համար հարկավոր է ոչնչացնել հայերին»[51]։ Հայերի դեմ

43 Moussa Prince. Op. cit., p. 26—27.

44 Նույն տեղում, էջ 31։

45 Ուսման աթ-Թուրք. նշվ. աշխ., էջ 247։

46 Ֆուադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 5։

47 Նույն տեղում, էջ 297։

48 Moussa Prince, Op. cit., p. 38.

49 Նույն տեղում, էջ 7։

50 Ֆուադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 297։

51 شفيق الريس ، التحدي اللبناني ١٩٧٥ — ١٩٧٦ ، بيروت ١٩٧٧ ، ص ٢١

(Շաֆիկ Ռայես. Լիբանանյան մարտահրավերը. 1975—1976. Բեյրութ, 1978, էջ 21)։

երիտթուրքերի և պաղեստինցի արաբների դեմ սիոնիստների հարագործությունների միջև համանման կապ է տեսնում նաև Հուսեյն Մուրուվան։ Ուսումնասիրելով բոլոր ցեղասպանությունների դրսևորումները XX դարում և ընդունելով, որ հայկական ցեղասպանությունն առաջինն էր մեր դարաշրջանում, Հուսեյն Մուրուվան գծում է XX դարի համաշխարհային պրակտիկայում իրագործված ցեղասպանությունների շղթան և անցման փուլերը։ Ըստ լիբանանյան պրոֆեսորի, այդ շղթան հետևյալ պատկերն ունի. թուրքական թուրանիզմ—գերմանական նացիզմ—իտալական ֆաշիզմ—սիոնիզմ[52]։ Ելակետայինը նա համարում է թուրանիզմը, որի զոհերը դարձան հայերը և կարող էին դառնալ արաբները, իսկ եզրափակող փուլը՝ սիոնիզմը։ Նրանց բոլորի համար ընդհանուրը Հուսեյն Մուրուվան համարում է ռասիզմը, որն իրականության մեջ կենսագործվում է ժողովուրդների ամբողջ խմբերի զանգվածային ոչնչացման ձևով։

Ի մի բերելով կարող ենք ասել, որ արաբական պատմագրության մեջ 1915 թ. հայկական ցեղասպանության հարցերի քննարկումը լույս է սփռում այդ ոճրագործության շատ կողմերի վրա, նպաստում երիտթուրքերի ազգային, այդ թվում և հակահայկական քաղաքականության ավելի խորը լուսաբանմանը, հայկական ցեղասպանության պատճառների ու երիտթուրքերի քաղաքական նպատակների ավելի բազմակողմանի բացահայտմանը և, վերջին հաշվով, օժանդակում ավելի ճիշտ ու համակողմանի պատկերացում կազմելու առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կատարված հայկական ողբերգության մասին։

ОСВЕЩЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН 1915 г. В АРАБСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Доктор ист. наук Н. О. ОГАНЕСЯН

Резюме

Арабские ученые—Фуад Хафиз, Мрван ал-Мудавар, Усман ат-Турк, Зейн Зейи, Джихад Салех, Муса Пренс, Амин Саид, Масуд Даир и другие, ответственным за геноцид считают Османское государство и руководство младотурок, которые действовали по заранее составленной программе, решив ликвидировать армянский вопрос путем уничтожения армян, превратить Османскую империю в этническом отношении в чисто турецкое государство, присоединить к нему территории России, населенные мусульманами и тем самым осуществить свои пантуранистсткие бредовые мечты. В арабской историографии господствующей является точка зрения, согласно которой в годы первой мировой войны младотурки стремились наряду с армянами уничтожить также арабов, айсоров и другие нетурецкие народы. Арабские историки резко осуждают политику геноцида в отношении армян. Фуад Хафиз считает геноцид армян «черной страницей XX в.» Усман ат-Турк рассматривает его как варварскую акцию, а Муса Пренс ввел в оборот понятие арменоцид, считая, что это «самый геноцидный геноцид».

---

[52] *Հուսեյն Մուրուվա. նշվ. աշխ., էջ 86—87։*